

## ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՅՏԸ ԿԱՐԳԱՎՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

- Անձնագիր ծննդյան վկայական
- Հաշմանդամության կարգը հաստատող փաստաթուղթ
- Հետազոտության նշանակման թերթիկ
- Հետազոտության թերթիկ
- Բժշկական տեղեկանք, որը պետք է լրացված լինի բժշկի կամ բուժհաստատության ձևաթղթի վրա և ստորագրված լինի բուժող բժշկի կողմից: Տեղեկանքում պետք է նշված լինի՝
  - ✓ Ապահովագրված անձի անունը, ազգանունը,
  - ✓ Ապահովագրված անձի՝ դիմելու ամսաթիվը,
  - ✓ կատարված և/կամ նշանակված լաբորատոր և/կամ գործիքային հետազոտությունները,
  - ✓ վերջնական ախտորոշումը,
  - ✓ նշանակված բուժումը (դեղերի ցանկը՝ ներառյալ դեղերի չափաբաժինը, ընդունման օրերի քանակը):
- **Էպիկրիզ** (քաղվածք հիվանդության պատմությունից): Էպիկրիզը, որը պետք է ստորագրված լինի բուժող բժշկի կողմից և կնքված լինի բուժհաստատության կնիքով: Էպիկրիզում պետք է նշված լինի՝
  - ✓ Ապահովագրված անձի անունը, ազգանունը,
  - ✓ Ապահովագրված անձի՝ դիմելու և դուրսգրման ամսաթիվը,
  - ✓ կատարված լաբորատոր և/կամ գործիքային հետազոտությունները,
  - ✓ վերջնական ախտորոշումը,
  - ✓ նշանակված բուժումը (դեղերի ցանկը՝ ներառյալ դեղերի չափաբաժինը, ընդունման օրերի քանակը)
- Դեղորայքի նշանակման թերթիկ (ախտորոշման առկայությունը պարտադիր է), որում պետք է նշված լինի՝
  - ✓ դեղերի ցանկը՝ ներառյալ դեղերի չափաբաժինը, ընդունման օրերի քանակը
- Փոխանակման քարտ
- Ատամնաբուժության դեպքում.
  - ✓ տեղեկանք, որտեղ պետք է նշված լինեն կատարված բժշկական գործողությունները
- Վճարումը հավաստող ֆինանսական փաստաթուղթ (ՀԴՄ կտրոն, հաշիվ-ապրանքագիր, դրամ-արկղային մուտքի օրդերի անդորրագիր)
- Անձը հաստատող փաստաթղթեր հատուցումը կանխիկ ստանալու համար
  - ✓ անձնագրի պատճեն կամ վարորդական իրավունքը
  - ✓ ծննդյան վկայականի պատճեն (եթե ապահովագրված անձն անչափահաս է, փաստաթղթերը ներկայացնում է նրա օրինական ներկայացուցիչը՝ հայր/մայր)
  - ✓ ապահովագրական քարտ

Փաստաթղթերը, այդ թվում հայտային դիմումը, կարող են ներկայացնել Ապահովագրական ընկերություն հետևյալ եղանակներից որևէ մեկով.

- ✓ Էլ. Փոստով- [medical@RGS.am](mailto:medical@RGS.am)
- ✓ Viber, Whatsapp: +(374 55) 05-07-40

Վճարային փաստաթղթերի բնօրինակները ինդրում ենք փակ ծրարով հանձնել ձեր Ընկերության ՄՌ դեպարտամենտ, որտեղից մեր աշխատակիցը կհավաքագրի դրանք ամսական կտրվածքով: Ծրարի վրա անհրաժեշտ է նշել անուն ազգանունը, ձեր պայմանագրի համարը և ապահովագրական քարտի վրա նշված անհատական համարը:

# ՐՕՇԴՕՇՏՐԱՎ



Հայտային փաստաղթերը պետք է ներկայացնել Ապահովագրողին բժշկական ծախսերը կատարելուց հետո առավելագույնը 45 օրվա ընթացքում:  
Սուր հիվանդության կապակցությամբ նշանակված դեղորայքի ձեռքբերման կտրոնները կարող են ունենալ ոչ ավելի քան **5 օրվա** վաղեմություն՝ նշանակման ամսաթվից հաշված:

Հայտի հետ կապված ընթացիկ հարցերի համար կարող եք աշխատանքային ժամերին զանազահարել Հայտերի Կենտրոնի հետևյալ հեռախոսահամարով՝ **060 622222**: